



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԱրդյուՆաբերական սեփականություն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 2 (26)

Агентство интеллектуальной собственности
Республики Армения

**ПРОМЫШЛЕННАЯ
СОБСТВЕННОСТЬ**

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են
հրապարակված 2003 թվականի հունիսի 20-ից

Երեւան 2003

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՏԵՐ	5, 71
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	7, 73
ՕԳՏԱԿԱՐ ՍՈՂԵԼՆԵՐ	21, 85
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	23, 87
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՍՈՒՇՆԵՐ	25, 89
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	27, 91
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	29
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին	31
ՑՈՒՑԻՉՆԵՐ	57
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	61
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ	92

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին

375010, Երևан, Главный проспект, Дом Правительства 3
Тел. 563-258 отдел приема заявок
Тел. 561-126 отдел информационно-технологического
обеспечения

Internet: <http://www.arnpatent.org>
E-mail: arnpat@cornet.am

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ	5, 71
Сведения о выданных патентах	7, 73
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ	21, 85
Сведения о выданных патентах	23, 87
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ	25, 89
Сведения о выданных патентах	27, 91
ТОВАРНЫЕ ЗНАКИ	29
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	31
УКАЗАТЕЛИ	57
СООБЩЕНИЯ	6
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	92

CONTENTS

INVENTIONS	5, 71
Information on granted patents	7, 73
UTILITY MODELS	21, 85
Information on granted patents	23, 87
INDUSTRIAL DESIGNS	25, 89
Information on granted patents	27, 91
TRADE MARKS	29
Information on registered trade marks and service marks	31
INDEXES	57
REPORTS	6
TWO-LETTER CODES	92

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՄՅԿ ST.9 ստանդարտի**

- 11 *արտոնագրի համարը*
- 13 *փաստաթղթի տեսակի կոդը*
 - A1 *Գյուտի հիմնական արտոնագիր*
 - A2 *Գյուտի նախնական արտոնագիր*
 - B2 *Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր*
- 21 *հայտի համարը*
- 22 *հայտի ներկայացման թվականը*
- 23 *լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն*
- 24 *արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը*
- 31 *առաջնային հայտի համարը*
- 32 *առաջնային հայտի ներկայացման թվականը*
- 33 *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը*
- 42 *հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը*
- 44 *գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 45 *գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 51 *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
- 54 *գյուտի անվանումը*
- 56 *տեղեկատվության աղբյուրներ*
- 57 *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
- 62 *ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
- 65 *հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը*
- 71 *հայտատուն, երկրի կոդը*
- 72 *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
- 73 *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
- 74 *արտոնագրային հավատարմատար*
- 85 *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
- 86 *միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը*
- 87 *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը*

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 7 **A01D 89/00** (11) **1278** (13) **A2**
(21) P20020151 (22) 06.09.2002
(42) 15.11.2002

(71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)

(72) Արշալույս Թարվերոյան (AM), Մերուժան Բաղդասարյան (AM), Արմեն Մարգարյան (AM)

(73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) Խոտի բրիկետների պատրաստման սարք
(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ խոտի բրիկետների պատրաստման սարքերին:

Սարքն ունի մանրատիչի հետ կապված խոտի հավաքիչ, մանրատիչը շարժաբերի պնեմատիկ մեխանիզմի եւ ցիկլոնի միջոցով կապված է բրիկետավորման մամլիչին, որն ունի օղակային մամլամայր եւ մամլող հոլովակներ: Ցիկլոնն ունի արտաքին եւ ներքին իրաններ, որոնց միջեւ տեղակայված է օղակաձեւ միջանկյալ պատ, որը ներքին իրանի հետ կազմում է ջրային շապիկ: Մամլիչն ունի օղակային փոխադրիչ, որի իրանը համատեղված է ցիկլոնի արտաքին իրանի հետ, իսկ ցիկլոնի մատուցող խողովակում տեղակայված են դիֆուզոր եւ ջրային շապիկի հետ հաղորդակցվող ծայրապանակավոր ջրախողովակ: Ջրախողովակի ծայրամասում տեղակայված է խցանային կափույր, որի խցանի սնուվրա ամրակցված է զսպանակած հարթ թիակ: Օդի հոսքի ազդեցության տակ փոփոխվում է թիակի դիրքը եւ կարգավորվում ջրի հոսքը, 4 նկ.:

(51) 7 **A24D 1/04** (11) **1279** (13) **A2**
(21) P20010127 (22) 08.03.2000
(86) PCT/GB00/00850, 08.03.2000
(85) 05.10.2001
(87) WO00/53037, 14.09.2000
(42) 16.09.2002

(31) 9905406.6 (32) 09.03.1999 (33) GB
9921734.1 14.09.1999 GB

(71) Ֆիլտրոնա Ինթըրնեյշնլ Լիմիթիդ (GB)

(72) Փոլ Ֆրենսիզ Քլարկ (GB)

(73) Ֆիլտրոնա Ինթըրնեյշնլ Լիմիթիդ (GB)

(74) Հ. Դավթյան

(54) Սիգարետի գտիչի ջերմակաղապարված գտող ձող, գտիչով սիգարետ եւ սիգարետի գտիչի՝ բազմակի երկարության ամբողջական ձող

(57) Գյուտը վերաբերում է ծխախոտի արտադրությանը, մասնավորապես՝ սիգարետների ջերմակաղապարված գտիչներին եւ գտիչներով սիգարետներին:

Սիգարետի գտիչի ջերմակաղապարված գտող ձողն ունի ծխախոտային ծուխը գտող նյութից պատրաստված խողովակաձեւ իրան, որը բաց է առնվազն մի ծայրից եւ ունի գտող նշված նյութից պատրաստված եւ խողովակաձեւ իրանի հետ մի ամբողջություն կազմող գտող խցափակիչ: Ձտիչով սիգարետն ունի փաթաթված ծխախոտային ձող, որը միացված է գտիչին: Առաջարկված է սիգարետի գտիչի բազմակի երկարության ամբողջական նախապատրաստվածք, որը կտրատվում է առանձին ձողերի, 5 նկ.:

(51) 7 **A61B 17/58** (11) **1280** (13) **A2**
(21) P20020172 (22) 11.10.2002
(42) 17.12.2002

(71) Սերգեյ Չախմախյան (AM)

(72) Սերգեյ Չախմախյան (AM), Ռազմիկ Մխիթարյան (AM)

(73) Սերգեյ Չախմախյան, Երեւան, Սարյան 29, բն. 1(AM)

(54) Խողովակաձեւ ոսկրերի օստեոսինթեզի սարք

(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժությանը, մասնավորապես՝ խողովակաձեւ ոսկրերի ներուկրախոռոչային օստեոսինթեզի սարքերին: Սարքն ունի մետաղյա ձող եւ սեւեռիչ տարր, որը ընդարձակումնակ պլաստմասսայից պատրաստված պատյան է: Պատյանն ունի քառանիստ պրոֆիլ եւ նեղացված ծայրեր: Ձողի մեկ ծայրը սրված է, իսկ մյուսը կատարված է անցքավոր հարթ ունկի տեսքով՝ ձողը ոսկրից հանելու համար, 2 նկ.:

(51) 7 **A61B 17/58** (11) **1281** (13) **A2**
(21) P20020171 (22) 11.10.2002
(42) 17.12.2002

(71) Սերգեյ Չախմախյան (AM)

(72) Սերգեյ Չախմախյան (AM), Ռազմիկ Մխիթարյան (AM)

(73) Սերգեյ Չախմախյան, Երեւան, Սարյան 29, բն. 1 (AM)

(54) Խողովակաձեւ ոսկրերի ներխոռոչային օստեոսինթեզի եղանակ

(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժությանը, մասնավորապես՝ խողովակաձեւ ոսկրերի ներուկրախոռոչային օստեոսինթեզի եղանակներին:

Օստեոսինթեզի եղանակը կայանում է նրանում, որ մետաղյա ձողը պատում են ջրային միջավայրում ընդարձակունակ պլաստմասսայով եւ ներմխրճում ոսկրախոռոչ: Միջոցով արձային հեղուկներում ձողը ընդարձակվում է եւ սեւեռում ոսկրի կոտրվածքները:

Բարձրացվում է բուժման արդյունավետությունը եւ աշխատանքի հարմարավետությունը:

(51) 7 A61K 9/68 (11) 1282 (13) A2
A24D 3/00

(21) P20020149 (22) 26.08.2002
(42) 17.10.2002

(71) Վահրամ Գաբգիմալյան (AM)
(72) Վահրամ Գաբգիմալյան (AM)
(73) Վահրամ Գաբգիմալյան, Երեւան, Արցախի 1,քմ.32(AM)

(54) Ծխախոտային կախվածության համալիր բուժման եղանակ եւ դրա իրագործման հավաքակազմ

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը եւ հակածխման միջոցների արտադրությանը, մասնավորապես՝ ծխախոտային կախվածության բուժման եղանակներին եւ հակածխման հավաքակազմներին:

Ծխախոտային կախվածության համալիր բուժման եղանակը ներառում է միկոտինաման ազդեցություն ունեցող պատրաստուկների կիրառմամբ միկոտինատեղակալող բուժման փուլի եւ հոգեբուժման փուլի միաժամանակ անցկացում: Որպես միկոտինաման ազդեցություն ունեցող պատրաստուկ օգտագործում են «Գամիբազին» հականիկոտինային ծանոնը, իսկ որպես ծխման գործընթացը նմանակեցնող միջոց՝ սնամեջիկներ, որոնք պատրաստված են զերադասելիորեն ացետատային թելքից եւ ունեն զերադասելիորեն անանուխային հոտավորիչ: Բուժումը անցկացնում են 10 օրվա ընթացքում: Հակածխման հավաքակազմը ներառում է 30 հականիկոտինային ծանոն եւ 10 սնամեջիկ:

2 անկախ կետ:

(51) 7 A61K 35/78 (11) 1283 (13) A2
(21) P20020166 (22) 08.10.2002
(42) 15.11.2002

(71) Սվետլանա Գրիգորյան (AM)
(72) Սվետլանա Գրիգորյան (AM)
(73) Սվետլանա Գրիգորյան, ՀՀ, Կոտայքի մարզ, գյուղ Նոր-Գեղի, Ա. Բարսեղյան փող. (AM)

(54) Մեղրաբուսական բուժական պատրաստուկ պարօդոնտոզների բուժման համար

(57) Գյուտը վերաբերում է մեղրաբուսական բուժական պատրաստուկներին եւ կարող է կիրառվել պարօդոնտոզների բուժման համար:

Առաջարկվում է պատրաստուկ, որը ներառում է եզան լեզվի տերեւների լուծամզուք, բնական մեղր եւ էթիլային սպիրտ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվ.%. եզան լեզվի տերեւների լուծամզուք՝ 20,0, բնական մեղր՝ 70,0, էթիլային սպիրտ՝ 10,0: Պատրաստուկով թրջած վիրախճուծը տեղադրում են լնդերի երկայնքով՝ օրական երկու անգամ, 20 րոպե տեւողությամբ, 7-10 օրվա ընթացքում:

Բարձրացվում է պարօդոնտոզների բուժման արդյունավետությունը:

(51) 7 A61K 35/78 (11) 1284 (13) A2
(21) P20020165 (22) 08.10.2002
(42) 15.11.2002

(71) Սվետլանա Գրիգորյան (AM)
(72) Սվետլանա Գրիգորյան (AM)
(73) Սվետլանա Գրիգորյան, ՀՀ, Կոտայքի մարզ, գյուղ Նոր-Գեղի, Ա. Բարսեղյան փող. (AM)
(54) Հականկային բուսաբուժական պատրաստուկ
(57) Գյուտը վերաբերում է հականկային բուսաբուժական պատրաստուկներին եւ կարող է կիրառվել սնկային հիվանդությունների բուժման համար:

Առաջարկվող պատրաստուկը ներառում է եզան լեզվի (տերեւներ) հյութ, վաղեմակ առեղջայինի (ծաղիկներ) հյութ, խատուտիկ դեղատուի (ծաղիկներ) հյութ, բնական մեղր եւ էթիլային սպիրտ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվ.%. եզան լեզվի տերեւների հյութ՝ 15,0, վաղեմակ առեղջայինի ծաղիկների հյութ՝ 30,0, խատուտիկ դեղատուի ծաղիկների հյութ՝ 30,0, բնական մեղր՝ 15,0, էթիլային սպիրտ՝ 10,0:

Բարձրացվում է սնկային հիվանդությունների բուժման արդյունավետությունը:

(51) 7 A61K 35/78 (11) 1285 (13) A2
(21) P20020164 (22) 08.10.2002
(42) 15.11.2002

(71) Սվետլանա Գրիգորյան (AM)
(72) Սվետլանա Գրիգորյան (AM)
(73) Սվետլանա Գրիգորյան, ՀՀ, Կոտայքի մարզ, գյուղ Նոր-Գեղի, Ա. Բարսեղյան փող. (AM)
(54) Բուսաբուժական պատրաստուկ երիկամային քարերի տրոհման համար

(57) Գյուտը վերաբերում է բուսաբուժական պատրաստուկներին եւ կարող է կիրառվել երիկամային քարերի տրոհման համար երիկամաքարային հիվանդության ժամանակ:

Առաջարկվող պատրաստուկը ներառում է եզան լեզվի (տերեւներ), մանդիկ ծտայինի (տերեւներ) հյութ, մասուրի (պտուղներ) հյութ, բնական մեղր եւ էփլային սպիրտ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվ.%. եզան լեզվի տերեւների հյութ՝ 15.0, մանդիկ ծտայինի տերեւների հյութ՝ 25.0, մասուրի պտուղների հյութ՝ 25.0, բնական մեղր՝ 25.0, էփլային սպիրտ՝ 10.0: Պատրաստուկը նշանակում են per os օրական երեկ անգամ, մեկական ճաշի գոյալ, ուտելուց 30 րոպե առաջ: Բուժման տևողությունը՝ 10-14 օր:

Բարձրացվում է երիկամային քարերի տրոհման արդյունավետությունը:

(51) 7 A61N 5/067 (11) 1286 (13) A2
A61P 17/02
A61H 33/04

(21) P20020085 (22) 27.05.2002
(42) 17.10.2002

(71) Հայկ Առաքելյան (AM), Ռոբերտ Խաչատրյան (AM)

(72) Հայկ Առաքելյան (AM), Ռոբերտ Խաչատրյան (AM)

(73) Հայկ Առաքելյան, Երեւան, Բաշինջաղյան 14, բն. 40 (AM), Ռոբերտ Խաչատրյան, Երեւան, Մաշտոցի 40ա, բն. 71 (AM)

(54) Ռենտգենյան ճառագայթունով ախտահարված ջերմային այրվածքներով վերքերի բուժման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է տարբեր ախտածագման այրվածքների, մասնավորապես՝ ռենտգենյան ճառագայթունով ախտահարված ջերմային այրվածքներով վերքերի բուժման եղանակներին:

Ռենտգենյան ճառագայթունով ախտահարված 2-րդ կամ 3-րդ աստիճանի ջերմային այրվածքներով վերքը նախապես մշակում են արծաթի իոններով հարստացված ջրային լուծույթով, ապա վերքի վրա հաջորդաբար ազդում, սկզբից՝ 7-12 րոպեի ընթացքում հելիում-նեոնային լազերի 20 միլիվատտ հզորությամբ ճառագայթով, 50 միլիտեսլա մագնիսական հոսքի խտությամբ հաստատուն մագնիսական դաշտով, իսկ հետո՝ ռուբինային լազերի ճառագայթի 7-10 իմպուլսով, յուրաքանչյուր իմպուլսը՝ 4 ջոուլ էներգիայով:

Ապահովվում է այրվածքների բուժման արդյունավետությունը:

(11) 1287 (13) A2
(51) 7 A61N 5/067
A61P 17/02
A61H 33/04

(21) P20020086 (22) 27.05.2002
(42) 17.10.2002

(71) Հայկ Առաքելյան (AM), Ռոբերտ Խաչատրյան (AM)

(72) Հայկ Առաքելյան (AM), Ռոբերտ Խաչատրյան (AM)

(73) Հայկ Առաքելյան, Երեւան, Բաշինջաղյան 14, բն. 40 (AM), Ռոբերտ Խաչատրյան, Երեւան, Մաշտոցի 40ա, բն. 71 (AM)

(54) Կենսաբանորեն ակտիվ բուժամիջոցի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կենսաբանորեն ակտիվ բուժամիջոցների ստացման եղանակներին, մասնավորապես, լազերային ֆոտոլիզի եղանակով ստացած բուժամիջոցներին:

Մետաղի իոններով ջրային լուծույթի հարստացումը կատարում են կիզակետելով 100 մլ թորած ջրում գտնվող մետաղի վրա նեոդիմով իտրիում-ալյումին նռնաքարե լազերի 60 կիլովատտ/սմ² հզորություն եւ 1,064 միկրոմետր ալիքի երկարություն ունեցող ճառագայթը: Որպես մետաղ օգտագործում են արծաթը, ոսկին, պլատինը, պղինձը կամ ցինկը:

Ընդլայնվում է կենսաբանորեն ակտիվ բուժամիջոցների տեսականին:

(51) 7 A61N 5/067 (11) 1288 (13) A2
A61P 17/02
A61H 33/04

(21) P20020087 (22) 27.05.2002
(42) 17.10.2002

(71) Հայկ Առաքելյան (AM), Ռոբերտ Խաչատրյան (AM), Ռիտա Էմինյան (AM)

(72) Հայկ Առաքելյան (AM), Ռոբերտ Խաչատրյան (AM), Ռիտա Էմինյան (AM)

(73) Հայկ Առաքելյան, Երեւան, Բաշինջաղյան 14, բն. 40 (AM), Ռոբերտ Խաչատրյան, Երեւան, Մաշտոցի 40ա, բն. 71 (AM), Ռիտա Էմինյան, Երեւան, Կասյան 4, բն. 9 (AM)

(54) Ռեւմատոիդ հիվանդությունների բուժման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է լազերային թերապիային, մասնավորապես՝ ռեւմատոիդ հիվանդությունների բուժման եղանակներին: Ռեւմատոիդ հիվանդությամբ տառապող հիվանդի բորբոքված եւ այտուցված տիրույթները նախապես մշակում են բուժիչ տորֆի լուծույթով, ապա հաջորդաբար ազդում, սկզբից՝ 10-15 րոպեի ընթացքում հելիում-նեոնային լազերի 25 միլիվատտ հզորությամբ եւ 6328 անգստրեմ ալիքի երկարությամբ ճառագայթով, իսկ հետո՝ սուտակե լազերի ճառագայթի 7-10 իմպուլսով:

յուրաքանչյուր իմպուլսը 4 ջուլ էներգիայով:
Ապահովվում է ռեւմատոիդ հիվանդություն-
ների բուժման բարձր արդյունավետությունը:

- | | | |
|--|------------------|----------------|
| (51) 7 A61N 5/067
A61P 17/02
A61H 33/04 | (11) 1289 | (13) A2 |
| (21) P20020088 | (22) 27.05.2002 | |
| (42) 17.10.2002 | | |
| (71) Հայկ Առաքելյան (AM), Ռոբերտ Խաչատրյան (AM) | | |
| (72) Հայկ Առաքելյան (AM), Ռոբերտ Խաչատրյան (AM) | | |
| (73) Հայկ Առաքելյան, Երեւան, Բաշինջաղյան 14, բն.40(AM), Ռոբերտ Խաչատրյան, Երեւան, Մաշտոցի 40ա, բն.71(AM) | | |

(54) Փսորիազի բուժման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է լազերային թերապիային, մասնավորապես՝ փսորիազի բուժման եղանակներին:

Հիվանդին նշանակում են լուսազգայունարարների հատկություններով պատրաստուկներ եւ արժաթի իոններով հարստացված ջրային լուծույթ: Լազերային ճառագայթումը կատարում են երկփուլ՝ սկզբից հեղիում-նեոնային լազերի 25 միլիվատտ հզորությամբ եւ 632 նանոմետր ալիքի երկարությամբ ճառագայթում, հետո՝ արգոնային լազերի 2 վատտ հզորությամբ եւ 480-510 նանոմետր ալիքի երկարությամբ ճառագայթումը: Լազերային ճառագայթման տեւողությունը՝ կախված ախտահարված մակերեսից, 10-12 րոպե է: Կախված հիվանդության ծանրության աստիճանից, բուժումը կարող է տեւել մինչեւ 12 ընթացաշրջան: Արժաթի իոններով հարստացված ջրային լուծույթը ստանում են լազերային ֆոտոլիզի արդյունքում, իսկ որպես լուսազգայունարարներ օգտագործում են սրոհունդի, եղինջի, հալվեի ոգեթուրմը կամ չիչխանի յուղը:

Ապահովվում է փսորիազի բուժման եղանակի բարձր արդյունավետությունը:

- | | | |
|--|------------------|----------------|
| (51) 7 A61N 5/067
A61P 17/02
A61H 33/04 | (11) 1290 | (13) A2 |
| (21) P20020089 | (22) 27.05.2002 | |
| (42) 17.10.2002 | | |
| (71) Հայկ Առաքելյան (AM), Ռոբերտ Խաչատրյան (AM) | | |
| (72) Հայկ Առաքելյան (AM), Ռոբերտ Խաչատրյան (AM) | | |
| (73) Հայկ Առաքելյան, Երեւան, Բաշինջաղյան 14, բն.40(AM), Ռոբերտ Խաչատրյան, Երեւան, Մաշտոցի 40ա, բն.71(AM) | | |

(54) Վիտիլիզոյի բուժման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է լազերային թերապիային, մասնավորապես՝ վիտիլիզոյի բուժման եղանակներին: Հիվանդին նշանակում են լուսազգայունարարի հատկություն ունեցող սրոհունդի ոգեթուրմը եւ պղնձի իոններով հարստացված ջրային լուծույթ: Լազերային ճառագայթումը կատարում են երկփուլ՝ սկզբից հեղիում-նեոնային լազերի 25 միլիվատտ հզորությամբ եւ 632 նանոմետր ալիքի երկարությամբ ճառագայթումը, հետո՝ արգոնային լազերի 2 վատտ հզորությամբ եւ 480-510 նանոմետր ալիքի երկարությամբ ճառագայթումը: Լազերային ճառագայթման տեւողությունը՝ կախված ախտահարված մակերեսից, 12-15 րոպե է, իսկ բուժման տեւողությունը՝ մինչեւ 12 ընթացաշրջան:

Ապահովվում է վիտիլիզոյի բուժման եղանակի բարձր արդյունավետությունը:

- | | | |
|--|------------------|----------------|
| (51) 7 A61N 5/067
A61P 17/02
A61H 33/04 | (11) 1291 | (13) A2 |
| (21) P20020090 | (22) 27.05.2002 | |
| (42) 17.10.2002 | | |
| (71) Հայկ Առաքելյան (AM), Ռոբերտ Խաչատրյան (AM) | | |
| (72) Հայկ Առաքելյան (AM), Ռոբերտ Խաչատրյան (AM) | | |
| (73) Հայկ Առաքելյան, Երեւան, Բաշինջաղյան 14, բն.40(AM), Ռոբերտ Խաչատրյան, Երեւան, Մաշտոցի 40ա, բն.71(AM) | | |
| (54) Ջերմային այրվածքների բուժման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է լազերային թերապիային, մասնավորապես՝ ջերմային այրվածքների բուժման եղանակներին: | | |

Ջերմային այրվածքով ախտահարված եւ ախտահարմանը հարակից շրջանները նախապես պատում են չիչխանի յուղի բարակ շերտով, ապա 7-12 րոպեի ընթացքում ազդում հեղիում-նեոնային լազերի ճառագայթումով՝ 20 միլիվատտ հզորությամբ:

Ապահովվում է ջերմային այրվածքների բուժման բարձր արդյունավետությունը:

- | | | |
|--|------------------|----------------|
| (51) 7 B01D 53/34
C01B 17/04 | (11) 1292 | (13) A2 |
| (21) P20020141 | (22) 08.08.2002 | |
| (42) 17.10.2002 | | |
| (71) Արծրունի Սաֆարյան (AM) | | |
| (72) Արծրունի Սաֆարյան (AM) | | |
| (73) Արծրունի Սաֆարյան, Երեւան, Ներսիսյան 1, բն.100(AM) | | |
| (54) Արտանետվող գազերից ծծմբային անհիդրիդի որսման եղանակ | | |

(57) Գյուտը վերաբերում է արտանետվող գազերի քիմիական մաքրմանը, մասնավորապես՝ արտանետվող գազերից ծծմբային անհիդրիդի որսման եղանակներին:

Անդրադարձնող, հորանաձեւ, եռակալման, ցիկլոնային վառարաններից, կոմպերտերներից եւ այլ սարքավորումներից արտանետվող գազերից ծծմբային անհիդրիդը որսում են արտորբցիայի մեթոդով: Պրոցեսը կատարում են բազմադարակային փրփրաշերտ առաջացնող արտորբերում, 60-70°C ջերմաստիճանում, որպես արտորբենտ կիրառում են հատիկավորված պղնձի արտադրության խարամ կամ պղնձի սուլֆատային խտանյութ, ջուր : խարամ կամ ջուր : խտանյութ 4,0-6,0:1 զանգվ. հարաբերակցությամբ:

Պարզեցվում է պրոցեսը, կրճատվում են ծախսերը:

(51) 7 B02B 3/00 (11) 1293 (13) A2
(21) P20020160 (22) 30.09.2002
(42) 17.12.2002

(71) Լիպարիտ Սահակյան (AM), Սամվել Սահակյան (AM)

(72) Լիպարիտ Սահակյան (AM), Սամվել Սահակյան (AM)

(73) Լիպարիտ Սահակյան, Երեւան, Բաշինջաղյան 176, բն. 17 (AM), Սամվել Սահակյան, Երեւան, Բաշինջաղյան 176, բն. 17(AM)

(54) Հաճարի թեփահանիչ

(57) Գյուտը վերաբերում է թեփահանիչ մեքենաներին, մասնավորապես հաճարի թեփահանիչներին եւ կարող է օգտագործվել գյուղատնտեսության մեջ՝ ֆերմերային եւ գյուղացիական տնտեսություններում:

Առաջարկված հաճարի թեփահանիչն ունի շարժահաղորդ լիսեռի վրա նստած հատած կոնի տեսք ունեցող ռետինապատ ռոտոր, կալսաթակի դեր կատարող պատյան եւ դրանց վրա տեղակայված զետեղարան: Ջետեղարանի ստորին մասում գտնվում են հասկիկային զանգվածի մատուցումը կարգավորող կարգավորիչ դռնակը, ինչպես նաեւ ռոտորի ու նրա պատյանի միջեւ բացակը կարգավորող հարմարանքը:

Բարձրացվում են թեփահանման արդյունավետությունը եւ որակը, նվազում է հատիկների կտրվածությունը եւ բացառվում է էնդոսպերմի թերամաշումը, 1 նկ.:

(51) 7 B02C 4/20 (11) 1294 (13) A2
(21) P20020009 (22) 28.01.2002
(42) 15.05.2002

(71) Հակոբ Բարսեղյան (AM)

(72) Հակոբ Բարսեղյան (AM)

(73) Հակոբ Բարսեղյան, Գյումրի, Արագած 6-րդ թաղ. 2, բն. 11 (AM)

(54) Ռոտորային աղաց

(57) Գյուտը վերաբերում է մանրացման սարքերին, մասնավորապես՝ չորացրած սխտորից փոշի ստանալուն :

Աղացն ունի ակոսներով անշարժ ստատոր եւ ռոտոր, ձագարաձեւ սնուցիչ եւ ելքի կցափող: Ռոտորն ունի հաստատուն քայլով ատամներ: Ստատորի խցի հատվածի ուրվագիծը կազմված է արքիմեդյան պարուրագծի հատվածից եւ դրա հայելային արտապատկերումից՝ սնուցիչի եւ ելքի անցքերով անցնող սիմետրիայի առանցքով: Ստատորի ակոսները գլանաձեւ են, դրանց շառավիղները սահուն փոքրանում են ստատորի մուտքի մասից դեպի ելքի մաս: Ակոսների շառավիղների կենտրոնները գտնվում են ռոտորի արտաքին մակերեսույթի եւ ստատորի ներքին պարուրաձեւ մակերեսույթի միջեւ անցնող կորի վրա:

Բացառվում է աղացի աշխատող տարրերի սեպապնդումը եւ կնձիկների գոյացումը, 2 նկ.:

(51) 7 B24B 53/00 (11) 1295 (13) A2
B24D 5/00
(21) P20020179 (22) 06.11.2002
(42) 17.12.2002

(71) Մաքսիմ Գրիգորյան (AM), Տիգրան Գրիգորյան (AM), Գուրգեն Անդրանիկյան (AM)

(72) Մաքսիմ Գրիգորյան (AM), Տիգրան Գրիգորյան (AM), Գուրգեն Անդրանիկյան (AM)

(73) Մաքսիմ Գրիգորյան, Երեւան, Ս.Տարոնցու նրբ. 4, բն. 1 (AM), Տիգրան Գրիգորյան, Երեւան, Ս. Տարոնցու փող. 3/1, բն. 7 (AM), Գուրգեն Անդրանիկյան, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Ավանգարդ թաղ., Սեւյան 1, բն. 2 (AM)

(54) Որդնակային հղկաքարերի ուղղման ավաստահղկանյութային գործիք

(57) Գյուտը վերաբերում է որդնակային հղկաքարերի ուղղման ավաստահղկանյութային գործիքների արտադրությանը:

Գործիքը սկավառակաձեւ է, ունի դեպի ծայրամասը շեղված ավաստակիր ճակատային մակերեսույթներ եւ նեղ գլանային գոտի: Գոտու վրա շրջագծով հաստատուն քայլով ամրակցված են ավաստակիր շերտի հատիկների չափերը գերազանցող եւ գոտու լայնությունը չգերազանցող ավաստե հատիկներ:

Բարձրացվում է գործիքի մաշակայունությունը, 3 նկ.:

- (51) 7 B28D 5/00 (11) 1296 (13) A2
 C30B 33/00
 (21) P20020158 (22) 18.09.2002
 (42) 17.12.2002
 (71) «Նանոտեխ» ՍՊԸ (AM)
 (72) Գագիկ Բղդոյան (RU), Գագիկ Խաչատրյան (AM), Ռուբեն Բաղդասարյան (AM), Նունե Զակոբյան (AM), Վահան Ավետիսյան (AM)
 (73) «Նանոտեխ» ՍՊԸ, Երեւան, Ե. Թադեւոսյան 12/5, բն. 11 (AM)
 (54) Միաբյուրեղ քիթեղների մշակման եղանակ
 (57) Գյուտը վերաբերում է կիսահաղորդչային սարքերի եւ ինտեգրալ միկրոսխեմաների արտադրության տեխնոլոգիային, հիմնականում, լանգասիտից, սիլիցիումից ու կվարցից քիթեղների եւ ըստ կարծրության դրանց մոտիկ միաբյուրեղների մեխանիկական եւ քիմիական մշակմանը:

Բյուրեղակտորից քիթեղների կտրտման պրոցեսից հետո կլորացնում են քիթեղների եզրերը, քիթեղները ազատ հղկանյութով երկկողմանի եղանակով եւ 25-35 մկմ թողվածքով հղկում են մինչեւ պահանջվող հաստությունը, ապա մաքրում անդրաձայնային եղանակով: Այնուհետեւ քիթեղների եզրերը կրկին կլորացնում են, ստուգում քիթեղների պարամետրերը, ձեւավորում քիթեղների խմբաքանակներ եւ ստանձում քիթեղները ստանձվող սկավառակներին: Դրանից հետո քիթեղները ազատ հղկանյութով միակողմանի եղանակով նուրբ հղկում են եւ ողորկում: Այնուհետեւ քիթեղները պոկում են ստանձվող սկավառակներից, մշակում քիմիական եղանակով եւ կատարում նրանց պարամետրերի տեխնիկական ստուգում:

Բարձրացվում է արտադրական պրոցեսի արտադրողականությունը եւ նվազում են արտադրության ծախսերը, 1 նկ.:

- (51) 7 B67D 5/62 (11) 1297 (13) A2
 (21) P20020139 (22) 29.07.2002
 (42) 16.09.2002
 (71) Գրիգոր Ավետիսյան (AM), Գրիգոր Դուզյան (AM)
 (72) Գրիգոր Ավետիսյան (AM), Գրիգոր Դուզյան (AM)
 (73) Գրիգոր Ավետիսյան, Երեւան, Դավիթաշեն 1-ին ք. 13, բն. 30(AM), Գրիգոր Դուզյան, Երեւան, Դավիթաշեն 1-ին ք. 13, բն. 51(AM)
 (54) Ընպելիքի սառեցման սարք
 (57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ ընպելիքի սառեցման սարքերին:
 Ընպելիքի սառեցման սարքը պատրաստված է խցի ձեւով եւ տեղակայված է ընպելիքի անոթի բկանցքում եւ ունի սառնազդակով բալուն:

Խցում տեղադրված են միջանցիկ խողովակներ՝ ընպելիքի արտահոսման համար, իսկ խցի արտաքին ճակատին կա անցք՝ խցի խոռոչից մթնոլորտ սառնազդակի արտանցման համար: Խողովակների արտաքին մակերեսային վրա կան կողեր: Բալունը կարող է տեղակայվել ինչպես խցի մեջ, այնպես էլ դրանից դուրս:
 Ապահովվում է անոթից արտահոսող ընպելիքի արագ սառեցումը, 4 նկ.:

- (51) 7 C01F 7/02 (11) 1298 (13) A2
 (21) P20020037 (22) 21.03.2002
 (42) 16.09.2002
 (71) Սերգեյ Յայրապետյան (AM)
 (72) Սերգեյ Յայրապետյան (AM), Բաբկեն Բայաթյան (AM)
 (73) Սերգեյ Յայրապետյան, Երեւան, Չեռնիշչեւսկու 58, բն. 1 (AM)
 (54) Ալյումինի օքսիդի ստացման եղանակ
 (57) Գյուտը վերաբերում է անօրգանական սորբենտների ստացմանը եւ կարող է կիրառվել քրոմատագրության մեջ :
 Նատրիումի ալյումինատի լուծույթի վրա ավելացնում են թորած ջուր եւ անընդհատ խառնման պայմաններում ավելացնում են ֆորմալին 1:1-2:1-1,5 հարաբերակցությամբ: Ստացված ալյումինի հիդրօքսիդը ֆիլտրում են, լվանում թորած ջրով, հասցնելով միջավայրի pH-ը 7,0-7,5, չորացնում 2 ժամվա ընթացքում 250°C ջերմաստիճանում, որից հետո թօծում են 5 ժամվա ընթացքում 500°C ջերմաստիճանում:
 Յնարավորություն է ստեղծվում ստանալ կարգավորվող կառուցվածքային հատկություններով ալյումինի օքսիդ :

- (51) 7 C02F 1/28 (11) 1299 (13) A2
 (21) P20020211 (22) 09.12.2002
 (42) 17.12.2002
 (71) Կարապետ Թահնազյան (AM), Գագիկ Վարդերեսյան (AM), Արթուր Մինասյան (AM)
 (72) Կարապետ Թահնազյան (AM), Գագիկ Վարդերեսյան (AM), Արթուր Մինասյան (AM)
 (73) Կարապետ Թահնազյան, Երեւան, Արզումանյան 16/2, բն.26(AM), Գագիկ Վարդերեսյան, Երեւան, Կ.Ուլնեցու 1, բն.5(AM), Արթուր Մինասյան, Երեւան, Տիգրան Մեծի 31, բն. 102 (AM)
 (54) Նավթանյութեր պարունակող հոսքաջրերի մաքրման եղանակ
 (57) Գյուտը վերաբերում է բնապահպանության բնագավառին, մասնավորապես՝ նավթանյութեր պարունակող հոսքաջրերի մաքրման եղանակներին :

եղանակը կայանում է նրանում, որ հոսքաջրերը ենթարկում են մաքրման կլանիչով՝ չորրորդային ամոնիումային աղերով մոդիֆիկացված փքած պեռլիտով:

Ապահովվում է մաքրման բարձր արդյունավետություն, նկ.6:

(51) 7 C03B 31/00 (11) 1300 (13) A2
C03B 32/02

(21) P20020122 (22) 02.07.2002
(42) 16.09.2002

(71) Ռուզաննա Ավետյան (AM)
(72) Ռուզաննա Ավետյան (AM), Ռուդոլֆ Օհանյան (AM), Կոստան Կոստանյան (AM)
(73) Ռուզաննա Ավետյան, Երեւան, Թադէւոսյան 2, բն.24(AM)

(54) Սինթետիկ գրանիտի ստացման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է շինարարական նյութերի արտադրությանը, մասնավորապես սինթետիկ գրանիտի ստացման եղանակներին:

SiO₂-Al₂O₃-MeO-Me₂O-F-S համակարգի ապակիները ձեւավորումից եւ 850°C ջերմաստիճանում 40-60րոպե միափուլ ջերմամշակումից, սառեցումից եւ մեխանիկական մշակումից հետո ենթարկում են լրացուցիչ ջերմամշակման թույլ վերականգնիչ միջավայրում 530-550°C ջերմաստիճանում:

Իրերի ջերմամշակումն իրականացնում են ըստ հետեւյալ ռեժիմի՝ մինչեւ 850°C տաքացում 60-70°C/ժամ արագությամբ, ապա սառեցում մինչեւ 700°C 250°C/ժամ արագությամբ, իսկ 700-500°C ջերմաստիճանային միջակայքում 60-70°C/ժամ արագությամբ: Լրացուցիչ ջերմամշակումը վերականգնիչ միջավայրում իրականացնում են ըստ հետեւյալ ռեժիմի՝ տաքացում մինչեւ 550°C 12°C/րոպե արագությամբ, այդ ջերմաստիճանում 30 րոպե ջերմամշակում, իսկ սառեցումը մինչեւ սենյակային ջերմաստիճան իրականացնում են 4°C/րոպե արագությամբ:

Եղանակի կիրառումը հնարավորություն է տալիս ստանալ բարձր մեխանիկական բնութագրերով եւ մեծ անդրադարձնող ունակությամբ շինարարական նյութեր:

(51) 7 C04B 14/04 (11) 1301 (13) A2
C09J 13/06

(21) P20020062 (22) 25.04.2002
(42) 16.09.2002

(71) «Վերականգնում» ՍՊԸ (AM)
(72) Ալեքսանդր Մելիքսեթյան (AM), Նինել Գուրգենյան (AM), Յրանտ Բաբայան (AM), Ռուդոլֆ Սարկիսով(AM)

(73) «Վերականգնում» ՍՊԸ, Վանաձոր, Գ. Լուսավորչի 25/1 (AM)

(54) Լցիչի ստացման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է անօրգանական լցիչի ստացման եղանակներին եւ կարող է օգտագործվել բնական եւ արհեստական քարերից պատրաստված շինարարական կառուցատարրերի սոսնձման համար օգտագործվող բազմաեթերային սոսինձների բաղադրանյութերում:

Լեռնային ապարը՝ ցեոլիթը քարադացում ջարդում են, կատարում են նախնական ջրազրկում, գնդիկավոր աղացով չոր մանրացում, ըստ մասնիկների մեծության մանրացված ապարի չափաբաշխում մանր՝ մինչեւ 0,056 մմ եւ խոշոր՝ 0,056-5,0մմ բաժնեմասերի, խոշոր բաժնեմասի ետ վերադարձ գնդիկավոր աղաց, մանր մասնիկներով բաժնեմասի լրացուցիչ ջրազրկում ե փաթեթավորում հերմետիկ տարայում:

Եղանակը հնարավորություն է տալիս բարձրացնել լցիչի ակտիվությունը:

(51) 7 C08F 120/56 (11) 1302 (13) A2
(21) P20020162 (22) 03.10.2002
(42) 17.12.2002

(71) Նորայր Բեյլերյան (AM)
(72) Նորայր Բեյլերյան (AM), Վազգանուշ Գրիգորյան (AM), Ռոզա Յակոբյան (AM)
(73) Նորայր Բեյլերյան, Երեւան, Դ. Մալյան 6, բն. 9(AM)

(54) Պոլիակրիլամիդի ստացման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է բարձրամոլեկուլային միացությունների քիմիային, մասնավորապես՝ ջրալուծելի պոլիակրիլամիդի ստացման եղանակներին:

Ակրիլամիդը ենթարկում են ռադիկալային պոլիմերացման սենյակային ջերմաստիճանում ջրային լուծույթում կալիումի պերսուլֆատի առկայությամբ, ընդ որում, ռեակցիայի խառնուրդի մեջ լրացուցիչ ներմուծում են երկմեթիլանիլին պարունակող հեպտան՝ ջրային ֆազ:հեպտանային ֆազ 1:1 ծավալային հարաբերակցությամբ:

Բարձրանում են պոլիակրիլամիդի մոլեկուլային զանգվածը եւ ելքը:

(51) 7 C09J 3/14 (11) 1303 (13) A2
C08F 20/06

(21) P20020136 (22) 22.07.2002
(42) 15.11.2002

(71) Մեժլում Երիցյան (AM)
(72) Ռայա Քարամյան (AM), Արման Նորայրյան (AM)

(73) Մեծլում երիցյան, Երեւան, Թոթովենցի 6/1, բն.17(AM)

(54) Ջրակայուն պոլիվինիլացետատային սոսինձ
(57) Գյուտը վերաբերում է պոլիվինիլացետատային ջրային դիսպերսիայի հիման վրա ջրակայուն սոսինձներին եւ կարող է օգտագործվել արդյունաբերության տարբեր ոլորտներում, մասնավորապես՝ կահույքի, ֆաներայի արտադրության մեջ:

Ջրակայուն պոլիվինիլացետատային սոսինձը պարունակում է **ՃՓ47/7C** մակնիշի պոլիվինիլացետատային ջրային դիսպերսիա եւ լցանյութ՝ օրթոֆոսֆորական թթվով ճեղքված ակտիվացված կառլինի ադդուկտներ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվ. %.

ՃՓ47/7C մակնիշի պոլիվինիլացետատային ջրային դիսպերսիա	95-98
օրթոֆոսֆորական թթվով ճեղքված ակտիվացված կառլինի ադդուկտներ	2-5

Մեծանում է ջրակայունությունը եւ սոսնձման ամրությունը:

(51) 7 **C09J 4/00** (11) **1304** (13) **A2**
C09J 11/04
C09J 131/08
C09J 167/00

(21) P20020064 (22) 25.04.2002
(42) 16.07.2002

(71) «Վերականգնում» ՍՊԸ (AM)
(72) Ալեքսանդր Մելիքսեթյան (AM), Նինել Գուրգենյան (AM), Հրանտ Բաբայան (AM)
(73) «Վերականգնում» ՍՊԸ, Վանաձոր, Գ. Լուսավորչի 25/1 (AM)

(54) Բազմաթերային սոսինձ
(57) Գյուտը վերաբերում է բազմաթերային սոսինձների բաղադրանյութերին եւ կարող է կիրառվել շինարարության մեջ, մասնավորապես՝ բնական եւ արհեստական քարերից պատրաստված շինարարական կառուցատարրերի սոսնձման համար:

Բազմաթերային սոսինձը պարունակում է բազմաթեր, արագարար, պնդարար, մանրացված հրաբխային ապար՝ տուֆ, կամ ֆելզիտ, կամ պեռլիտ կամ պեմզա, ինչպես նաեւ ջրազրկված ցեոլիթ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվ. %.

բազմաթեր	30,0-76,0
պնդարար	2,0-2,5
արագարար	1,0-1,5
մանրացված ապար	21,0-47,0
ջրազրկված ցեոլիթ	5,0-15,0

Մեծանում է սոսնձման ամրությունը եւ շահագործման ժամկետը:

(51) 7 **C09J 4/00** (11) **1305** (13) **A2**
C09J 11/04
C09J 131/08
C09J 167/00

(21) P20020065 (22) 25.04.2002
(42) 16.07.2002

(71) «Վերականգնում» ՍՊԸ (AM)
(72) Ալեքսանդր Մելիքսեթյան (AM), Նինել Գուրգենյան (AM), Հրանտ Բաբայան (AM)
(73) «Վերականգնում» ՍՊԸ, Վանաձոր, Գ. Լուսավորչի 25/1 (AM)

(54) Բազմաթերային սոսինձ
(57) Գյուտը վերաբերում է բազմաթերային սոսինձների բաղադրանյութերին եւ կարող է կիրառվել շինարարության մեջ, մասնավորապես՝ բնական եւ արհեստական քարերից պատրաստված շինարարական կառուցատարրերի սոսնձման համար:

Բազմաթերային սոսինձը պարունակում է բազմաթեր, արագարար, պնդարար, անօրգանական լցիչ՝ մանրացված աղյուս, ինչպես նաեւ ջրազրկված ցեոլիթ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվ. %.

բազմաթեր	30,0-76,0
պնդարար	2,0-2,5
արագարար	1,0-1,5
մանրացված աղյուս	15,0-52,0
ջրազրկված ցեոլիթ	5,0-15,0

Մեծանում է սոսնձման ամրությունը եւ շահագործման ժամկետը:

(51) 7 **C09J 4/00** (11) **1306** (13) **A2**
(21) P20020059 (22) 25.04.2002
(42) 16.09.2002

(71) «Վերականգնում» ՍՊԸ (AM)
(72) Ալեքսանդր Մելիքսեթյան (AM), Նինել Գուրգենյան (AM), Հրանտ Բաբայան (AM)
(73) «Վերականգնում» ՍՊԸ, Վանաձոր, Գ. Լուսավորչի 25/1 (AM)

(54) Բազմաթերային սոսինձ
(57) Գյուտը վերաբերում է բազմաթերային սոսինձների բաղադրանյութերին եւ կարող է կիրառվել շինարարության մեջ, մասնավորապես՝ բնական եւ արհեստական քարերից պատրաստված շինարարական կառուցատարրերի սոսնձման համար:

Բազմաթերային սոսինձը պարունակում է բազմաթեր, արագարար, պնդարար, լցիչ՝

ցեոլիթ, ինչպես նաև ջրազրկված ցեոլիթ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվ. %.

բազմաթեր	30,0-76,0
պնդարար	2,0-2,5
արագարար	1,0-1,5
ցեոլիթ	21,0-47,0
ջրազրկված ցեոլիթ	5,0-20,0

Մեծանուն է ստանձնան ամրությունը եւ շահագործման ժամկետը:

(51) 7 C12N 11/06 (11) 1307 (13) A2
C12P 19/06
C12P 19/02
C12N 11/00

(21) P20020155 (22) 16.09.2002
(42) 17.10.2002

(71) Մերքուրի Սփարկ Լիմիթիդ (GB)
(72) Վարուժան Աբելյան (AM)
(73) Մերքուրի Սփարք Լիմիթիդ, Լոնդոն, Մեթոն սթրիթ 22 (GB)

(54) Գլիկոզիլացված ստեւիոզիդների ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կենսատեխնոլոգիային, մասնավորապես գլիկոզիլացված ստեւիոզիդների ստացման եղանակներին:

Գլիկոզիլացված ստեւիոզիդների ստացման եղանակը ներառում է ցիկլոֆոսֆատի (դոնոր) եւ ստեւիոզիդի (ակցեպտոր) միջեւ տրանսգլիկոզիլացման ռեակցիան իմոբիլիզացված ցիկլոֆոսֆատի միջոցով կամ ստեւիոզիդի միջոցով: Իմոբիլիզացված ֆերմենտի օգտագործումը թույլ է տալիս գործընթացը կատարել ամբողջապես լցունված կենսառեակտորի պայմաններում:

Ապահովվում է վերջնական արգասիքի ելքի ու տրանսգլիկոզիլացման աստիճանի բարձրացումը եւ տեխնոլոգիական գործընթացի անընդհատությունը:

(51) 7 C23F 11/00 (11) 1308 (13) A2
C23F 13/00

(21) P20020180 (22) 06.11.2002
(42) 15.11.2002

(71) Կարապետ Թահմազյան (AM)
(72) Կարապետ Թահմազյան (AM), Գեղեցիկ Հովհաննիսյան (AM), Հովհաննես Ջանիկյան (AM), Վիկտոր Բախտանյան (AM)

(73) Կարապետ Թահմազյան, Երեւան, Արզումանյան 16/2, բն.26(AM)

(54) Պողպատի թթվային կոռոզիայի արգելակիչ եւ դրա ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է թթվային միջավայրում պողպատե սարքավորումը կոռոզիայից պաշտպանելու արգելակիչներին եւ դրանց ստացման եղանակներին:

Պողպատի թթվային կոռոզիայի արգելակիչը պարունակում է 3-քլոր-2-բութենիլուրոտրոպոնիումի քլորիդ, 3-քլոր-2-բութեն-1-ոլ, պղնձի (I) յոդիդ եւ ջուր, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվ. %.

3-քլոր-2-բութենիլուրոտրոպոնիումի քլորիդ	30-50
3-քլոր-2-բութեն-1-ոլ	9-18
պղնձի (I) յոդիդ	0.6-4.4
ջուր	մնացածը

Արգելակիչի ստացման եղանակը կայանում է նրանում, որ արգելակիչի բաղադրանյութը սինթեզում են ուրոտրոպին, երկքլորբութեն, պղնձի(II) սուլֆատ, պղնձի յոդիդ եւ ջուր պարունակող ելային խարնուրդից 60-80°C ջերմաստիճանում, մեկ փուլով եւ ստանում են հոմոգեն ջրային լուծույթ, ընդ որում ելանյութերը վերցնում են ուրոտրոպին: Երկքլորբութեն 5,6:(8,1+13,5) եւ պղնձի(II)սուլֆատ: պղնձի յոդիդ: ջուր (0.50+0.92):(0.52+0.95):(40+60) զանգվ. հարաբերակցությամբ:

Արգելակիչը արդյունավետ է բարձր ջերմաստիճաններում:

(51) 7 C25B 1/02 (11) 1309 (13) A2
C25B 1/04

(21) P20020138 (22) 29.07.2002
(42) 17.10.2002

(71) Հայկազունի Անդրեասյան (AM)
(72) Հայկազունի Անդրեասյան (AM)
(73) Հայկազունի Անդրեասյան (AM)
(74) Ա. Պետրոսյան

(54) Ջրի էլեկտրոլիզի միջոցով ջրածնի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրաքիմիայի բնագավառին, մասնավորապես ջրի էլեկտրոլիզի միջոցով ջրածնի ստացման եղանակներին:

Էլեկտրոլիզը կատարում են պալադիում պարունակող ծակոտկեն կաթոդ ունեցող էլեկտրոլիզարարում, ջրածնի՝ անդրակաթոդային տիրույթից արտածման պայմաններում: Ընդ որում պրոցեսը կատարում են միջէլեկտրոդային տիրույթի 1-2 ՄՊա ճնշման եւ 150-200°C ջերմաստիճանի պայմաններում:

Նվազում է պրոցեսի էներգատարությունը:

- (51) 7 C25C 5/02 (11) 1310 (13) A2
 (21) P20020126 (22) 09.07.2002
 (42) 17.10.2002
 (71) «ԷԿՈ-ԱՏՈՍ» ՍՊԸ (AM)
 (72) Գագիկ Մարտոյան (AM), Սահակ Ինճեյան (AM), Սուքիաս Տոնիկյան (AM), Մանուկ Դեմիրճյան (AM), Ջավեն Կիրակոսյան (US)
 (73) «ԷԿՈ-ԱՏՈՍ» ՍՊԸ, Երեւան, Նժդեհի 12/15 (AM)
 (54) Մետաղների կորզման էլեկտրոլիտային եղանակ
 (57) Գյուտը վերաբերում է էլեկտրաքիմիայի բնագավառին, մասնավորապես՝ լուծույթներից մետաղների խորը կորզման եղանակներին:
 Մետաղ պարունակող ջրային լուծույթը բաժանում են հիմնային եւ թթվային լուծույթների եռախցիկ էլեկտրադիալիզարարում, որի անոդային եւ կաթոդային խցիկներում համապատասխան իոնների խտությունը պահպանում են կայուն, ապա մետաղները հեռացնում են էլեկտրոլիզային սարքի սնդիկային կաթոդի վերին մակերեսից, որը դիէլեկտրիկ միջնորդով առանձնացված է սարքի աշխատանքային խցիկից:
 Բարձրանում է եղանակի արդյունավետությունը, 2 նկ.:

- (51) 7 E02D 31/08 (11) 1311 (13) A2
 (21) P20020173 (22) 11.10.2002
 (42) 17.12.2002
 (71) «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ (AM)
 (72) Լեւոն Մանուկյան (AM), Սահակ Արզումանյան (AM)
 (73) «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ, Երեւան, Կորյունի 14 (AM)
 (54) Թույլ կապակցված գրունտների դեֆորմացիաների գրանցման սարք
 (57) Գյուտը վերաբերում է լեռնային արդյունաբերությանը եւ կարող է օգտագործվել հիդրոտեխնիկական շինարարությունում, արդյունաբերության այլ ճյուղերում, որտեղ անհրաժեշտ է վերահսկել գրունտների եւ սողանքային զանգվածների հնարավոր դեֆորմացիաները:
 Թույլ կապակցված գրունտների դեֆորմացիաների գրանցման սարքը բաղկացած է փխրուն հոսանքահաղորդիչ նյութից պատրաստված կամ հոսանքահաղորդիչ նյութի շերտով պատված ձողաձեւ կամ խողովակաձեւ տարրից, որն էլեկտրական շղթային միանալու համար ունի ելքեր: Ձողաձեւ կամ խողովակաձեւ տարրը տեղադրված է քայքայող օղակաձեւ էլեմենտների մեջ եւ իր ծայրերին ունի ճակատային սեւեռիչներ: Ճակատային սեւեռիչները կոշտ կապով ամրացված են վերահսկվող տեղամասում

տեղադրված հենարանների վրա, իսկ քայքայող էլեմենտները կոշտ կապերով ամրացված են վերահսկվող տեղամասից դուրս գտնվող անշարժ տեղադրված հենարանների միջեւ ձգված մետաղաճոպանի վրա:
 Բարձրանում է թույլ կապակցված գրունտների դեֆորմացիաների գրանցման արդյունավետությունը, նկ. 2:

- (51) 7 E04B 1/04 (11) 1312 (13) A2
 E04B 1/16
 E04C 2/06
 (21) P20020083 (22) 24.05.2002
 (42) 16.07.2002
 (71) «ԴԱՏԻՍԱ» ՍՊԸ (AM), Տիգրան Սարգսյան (AM)
 (72) Տիգրան Սարգսյան (AM), Դավիթ Սարգսյան (AM)
 (73) «ԴԱՏԻՍԱ» ՍՊԸ, Երեւան, Վ.Փափազյան 16ա, բն. 17 (AM), Տիգրան Սարգսյան, Երեւան, Վ. Փափազյան 16ա, բն.17(AM)
 (54) Շենք եւ շինություններ շինարարական բլոկներից
 (57) Գյուտը վերաբերում է շինարարության բնագավառին, մասնավորապես՝ պատերի չոր շարվածք ապահովող շինարարական բլոկների օգտագործմամբ շենքերի եւ շինությունների արագացված կառուցման եղանակներին:
 Շենքերը եւ շինությունները իրականացված են շինարարական բլոկներից, որոնք ունեն միակցման համար նախատեսված ցցուն մասեր եւ փորվածքներ: Բլոկները վերելի եւ տակի ճակատներին ունեն երկայնական ուղղությամբ բութ անկյան տակ ուղղված երկուական սիմետրիկ հարթություն, որոնք վերելի ճակատին կազմում են երկու սիմետրիկ ցցվածք եւ նրանց միջեւ գտնվող փորվածք, տակի ճակատին՝ երկու սիմետրիկ փորվածք: Բլոկները կողային ճակատներին ունեն իրար նկատմամբ բութ անկյան տակ ուղղված երկու հարթություն, որոնք կազմում են փորվածք :
 Առաջարկվում են շենքի առանձին կոնստրուկցիաների լուծումներ՝ գրոյական անկյունաքար, գրոյական սալաքար, պատուհանի բացվածքի ստորին սալաքար, պատուհանի կամ դռան բարավոր եւ այլն:
 Ապահովվում է շենքերի եւ շինությունների ամրությունը եւ սեյսմակայունությունը, նկ. 8:

- (51) 7 E04H 9/02 (11) 1313 (13) A2
 (21) P20020143 (22) 13.08.2002
 (42) 17.12.2002
 (71) Ռուբեն Բաղալյան (AM), Կարեն Բաբախանով(AM), Լեւոն Բարսեղյան (AM), Ջավեն Խլղաթյան (AM)

(72) Ռուբեն Բաղալյան (AM), Կարեն Բաբախանով (AM), Լեւոն Բարսեղյան (AM), Ջավեն Խլղաթյան (AM)

(73) Ռուբեն Բաղալյան, Երեւան, Լալայանց 47ա, բն. 47(AM), Կարեն Բաբախանով, Երեւան, Նոր Նորքի 5-րդ զանգվ., Ս. Գալշոյան 26, բն. 16(AM), Լեւոն Բարսեղյան, Երեւան, Նոր Նորքի 1-ին զանգվ. 76/77, բն. 29(AM), Ջավեն Խլղաթյան, Երեւան, Բաբաջանյան 63, բն.3(AM)

(54) Շենքի ծավալային սեյսմապաշտպանիչ համակարգ

(57) Գյուտը վերաբերում է սեյսմակայուն շինարարության բնագավառին, մասնավորապես՝ գոյություն ունեցող շենքերի սեյսմապաշտպանությանը:

Շենքի սեյսմապաշտպանիչ համակարգը ներառում է շենքի հակադիր կողմերից կառուցվող երկու համաչափ, ծավալային կոշտության պարփակ բլոկներ՝ կազմված լայնական եւ երկայնական դիաֆրագմաներից, որոնց գունարային կոշտությունը գերազանցում է շենքի կոշտությունը երկու փոխուղղահայց ուղղություններում: Կոշտության բլոկները միացվում են շենքին ծածկերի մակարդակում առածգական կամ առածգապլաստիկ կապերով, որոնք ապահովում են շենքի եւ կոշտության բլոկների համատեղ աշխատանքը եւ միաժամանակ թույլ են տալիս նրանց անկախ դեֆորմացիաներն ուղղահայաց ուղղությամբ:

Կապերն իրենցից ներկայացնում են ցինկապատ ամրանային ձողերից պատրաստված ճաղային ֆերմաններ, որոնց գոտիները խարսխված են կոշտության բլոկների երկաթբետոնե վերնածածկում, ինչպես նաեւ շենքի լրացուցիչ միաձույլ երկաթբետոնե սալում, որը շենքի հավաքովի վերնածածկը վերածում է հորիզոնական կոշտ սկավառակի: Անհրաժեշտության դեպքում նմանատիպ կապերը կարող են իրականացվել նաեւ շենքի ու կոշտության բլոկների միջհարկային ծածկերի մակարդակում:

Ապահովվում է շենքի հուսալիությունը եւ սեյսմակայունությունը, նկ. 2:

(51) 7 F41B 6/00 (11) 1314 (13) A2
(21) P20020123 (22) 03.07.2002
(42) 15.11.2002

(71) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (AM)

(72) Ժորա Միրզաբեկյան (AM), Վարդան Ղազարյան (AM)

(73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Իմպուլսային էլեկտրամագնիսական արագացուցիչ

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրատեխնիկայի բնագավառին եւ կարող է կիրառվել տարբեր տեխնոլոգիական պրոցեսներում, մասնավորապես՝ արկերի արձակման համար:

Իմպուլսային էլեկտրամագնիսական արագացուցիչում, որն ունի պողպատյա կարկաս, որի ներսում տեղադրված է գլանային խարխիւր (արկը), եւ էլեկտրական կոճ, որը փաթաթված է կարկասի վրա, գյուտի համաձայն, կարկասը կազմված է երկու կիսագլաններից, որոնց միջեւ կա բացակ, իսկ խարխիւր սնամեջ է եւ պատրաստված է ալյումինից կամ պղնձից, 1 նկ. :

(51) 7 F41B 6/00 (11) 1315 (13) A2
(21) P20020121 (22) 01.07.2002
(42) 15.11.2002

(71) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (AM)

(72) Հրայր Ահարոնյան (AM), Գեորգի Արեշյան (AM), Ժորա Միրզաբեկյան (AM)

(73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Էլեկտրամագնիսական գծային արագացուցիչ

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրամագնիսական գծային արագացուցիչներին, որոնք թափավազք են հաղորդում մետաղական մարմիններին, եւ կարող է կիրառվել հատուկ տեխնիկայում:

Էլեկտրամագնիսական գծային արագացուցիչն ունի դիէլեկտրական խողովակի վրա տեղադրված եռաֆազ պարուրածեւ փաթույթներ, իսկ եռաֆազ պարուրածեւ փաթույթներով դիէլեկտրական խողովակը տեղակայված է ֆեռոմագնիսական խողովակի մեջ, 1 նկ.:

(51) 7 G01R 17/10 (11) 1316 (13) A2
(21) P20020132 (22) 10.07.2002
(42) 17.10.2002

(71) Խորեն Մամիկոնյան (AM)

(72) Խորեն Մամիկոնյան (AM)

(73) Խորեն Մամիկոնյան, Գյումրի, Ն.Շնորհալու 25, բն.24(AM)

(54) Դիմադրության աճի չափիչ

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրաչափողական տեխնիկային եւ նախատեսված է դիմադրության աճը չափելու համար:

Չափիչն ունի հաստատուն լարման աղբյուր, դիմադրությունների համեմատման չափողական շղթա, համեմատման ռեզիստոր, հեմարանային ռեզիստոր, հաստատուն հոսանքի երկու ուժեղարար, երկդիրք երկու փոխանցատիչ, հաստատուն լարման ցուցասարք: Չափման օբյեկտը միացված է առաջին ուժեղարարի հետադարձ

կապի շղթայում: Փոխանջատիչների տարբեր դիրքերում կատարում են չորս չափում, որոնց արդյունքներով որոշում չափվող դիմադրության աճի ճշգրիտ արժեքը:

Բարձրացվում է չափման ճշգրտությունը, 1 նկ.:

- (51) 7 **G01R 33/02** (11) **1317** (13) **A2**
G01R 33/12
- (21) P20020153 (22) 06.09.2002
- (42) 15.11.2002
- (71) Գեւորգ Կարդաշյան (AM), Աղասի Հակոբյան (AM)
- (72) Գեւորգ Կարդաշյան (AM), Աղասի Հակոբյան (AM)
- (73) Գեւորգ Կարդաշյան, Երեւան, Մ.Հերացու 22, բն. 21 (AM), Աղասի Հակոբյան, Գյումրի, Մանուշյան 18, բն. 52 (AM)
- (54) Ֆեռոմագնիսական փոշենյութերի մագնիսական պարամետրերի չափման սարք
- (57) Գյուտը վերաբերում է մագնիսական չափումներին եւ կարող է կիրառվել մագնիսական փոշենյութերից մագնիսական լաքերի եւ այլ խառնուրդների պատրաստման ընթացքում փոփոխական մագնիսական դաշտում ավտոմատ կերպով մագնիսական պարամետրերը չափելու համար:

Սարքն ունի հաջորդաբար միացված ազդանշանային գեներատոր, դիֆերենցիալ ուժեղարար, ինտեգրատոր, հզորության ուժեղարար, ռեզիստոր, մագնիսացնող փաթույթ, մագնիսական ինդուկցիայի առաջնային կերպափոխիչ, մագնիսական դաշտի լարվածության առաջնային կերպափոխիչ, արգելափակիչ գտիչ, ուժեղարար, առաջին եւ երկրորդ համաձայնեցման բլոկներ, կառավարման բլոկ, լարման բաժանարար, սահմանափակիչ ուժեղարար, բազմապատկիչ, գրանցման բլոկ, մագնիսական ինդուկցիայի եւ մագնիսական դաշտի լարվածության ամպլիտուդային դետեկտորներ, մաթեմատիկական բաժանարար եւ կոմուտատոր: Մագնիսացնող փաթույթը փաթաթված է ոչ ֆեռոմագնիսական նյութից պատրաստված տորոիդաձեւ խողովակի վրա, որի վրա կա անցք փորձարկվող ֆեռոմագնիսական փոշենյութի տեղավորման համար: Մագնիսական ինդուկցիայի առաջնային կերպափոխիչը կատարված է տորոիդաձեւ խողովակի վրա փաթաթված չափիչ փաթույթի տեսքով, իսկ մագնիսական դաշտի լարվածության առաջնային կերպափոխիչը՝ միմյանց հետ հաջորդաբար միացված Հոլի տանգենցիալ կերպափոխիչների տեսքով, որոնք տեղակայված են հավասար հեռավորությունների վրա տորոիդաձեւ խողովակի ամբողջ երկարությամբ:

Ընդլայնվում են սարքի ֆունկցիոնալ հնարավորությունները, բարձրացվում է չափումների ճշտությունը, 1 նկ.

- (51) 7 **H02N 1/08** (11) **1318** (13) **A2**
(21) P20020127 (22) 09.07.2002
- (42) 16.09.2002
- (71) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (AM)
- (72) Գեորգի Արեշյան (AM), Անտոն Մայիլյան (AM), Վարդգես Մաիլյան (AM)
- (73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երևան, Տերյան 105 (AM)
- (54) Ունակային սինքրոն շարժիչ
- (57) Գյուտը վերաբերում է էլեկտրական մեքենաներին եւ կարող է կիրառվել կենցաղային եւ հատուկ տեխնիկայում:

Ունակային սինքրոն շարժիչն ունի եռաֆազ լարման ցանցին միացած երեք էլեկտրոդներով ստատոր եւ սինետրիկ երկու գրգռման էլեկտրոդներով սկավառակաձեւ ռոտոր, որի գրգռման էլեկտրոդների ընդգրկման անկյունը կազմում է 120-150 էլեկտրական աստիճան: Ռոտորի սկավառակի վրա, գրգռման էլեկտրոդների սինետրիայի առանցքին ուղղահայաց առանցքով տեղակայված են զույգ սինետրիկ լրացուցիչ էլեկտրոդներ, ընդ որում եւ գրգռման, եւ լրացուցիչ էլեկտրոդները միացված են միմյանց համապատասխան ակտիվ դիմադրությունով:

Պարզեցվում է ունակային սինքրոն շարժիչի կառուցվածքը, 1 նկ.:

- (51) 7 **H02N 11/00** (11) **1319** (13) **A2**
(21) P20020111 (22) 19.06.2002
- (42) 16.09.2002
- (71) Հրաչիկ Շամիրյան (RU)
- (72) Հրաչիկ Շամիրյան (RU)
- (73) Հրաչիկ Շամիրյան, ՌԴ, Վոլգոգրադ, Սկոսիրեւի 1բ, հանրակացարան 2, մասնաշենք 4 (RU)

- (54) էլեկտրամագնիսական շարժիչ
- (57) Գյուտը վերաբերում է մեքենաշինության բնագավառին, մասնավորապես՝ մագնիսական էներգիան մեխանիկական շարժման կերպափոխող սարքերին և կարող է օգտագործվել արդյունաբերության տարբեր ոլորտներում:

Մագնիսական շարժիչն ունի ծնկավոր տանող եւ չորս չորսծնկանի լիսեռներ, որոնց ծայրերին անշարժ ամրացված են երկուական ատամնանիվ: Տանող լիսեռի իրանին խաչաձեւ միացված են չորս աշխատանքային գլաններ, որոնցից յուրաքանչյուրի մեջ անշարժ տեղա-

դրված է գլանաձեւ մագնիսական պարկուճ, իսկ նրա մեջ՝ մագնիսական մխոց: Մխոցը եւ պարկուճը բաժանված են միմյանցից օդի շերտով եւ նրանց մագնիսական բեւեռները ուղղված են մեկը մյուսին: Չորսծնկանի լիսեռի վրա տեղադրված է զսպանակավոր էլեկտրական խրոցակ, իսկ ծնկների վրա անշարժ ամրացված է կիսալուսնաձեւ մագնիս, որի մագնիսական բեւեռն ուղղված է մագնիսական մխոցի նույնանշան բեւեռին: Չորսծնկանի լիսեռի ծնկներից յուրաքանչյուրում տեղադրված է բեռ բարձրացնող էլեկտրամագնիս: Մագնիսական մխոցները շարժաթելին, իրանը տանող լիսեռին, չորսծնկանի լիսեռները աշխատանքային գլանների միացված են հաստատուն մագնիսների միջոցով: Ատամնանիվների ամեն մի ատամի վրա տեղադրված է հաստատուն մագնիս: Տանող լիսեռի վրա կոշտ ամրացված է թափանիվ: Բարձրացվում է մագնիսական էներգիայի մեխանիկական շարժման կերպափոխման արդյունավետությունը, 15 նկ.:

(51) 7 H02N 11/00 (11) 1320 (13) A2
 (21) P20020112 (22) 19.06.2002
 (42) 16.09.2002
 (71) Յրաչիկ Շամիրյան (RU)
 (72) Յրաչիկ Շամիրյան (RU)
 (73) Յրաչիկ Շամիրյան, ՌԴ, Վոլգոգրադ, Սկոսիրեւի 1բ, հանրակացարան 2, մասնաշենք 4 (RU)
 (54) Էլեկտրամագնիսական շարժիչ
 (57) Գյուտը վերաբերում է մեքենաշինության բնագավառին, մասնավորապես՝ մագնիսական էներգիան մեխանիկական շարժման կերպափոխող սարքերին և կարող է օգտագործվել արդյունաբերության տարբեր ոլորտներում:
 Մագնիսական շարժիչն ունի ծնկավոր տանող եւ չորս չորսծնկանի լիսեռներ, որոնց ծայրերին անշարժ ամրացված են երկուական ատամնանիվ: Տանող լիսեռի կենտրոնական իրանին խաչաձեւ միացված են չորս աշխատանքային գլան, որոնցից յուրաքանչյուրի մեջ անշարժ տեղադրված է գլանաձեւ մագնիսական պարկուճ, իսկ նրա մեջ՝ մագնիսական մխոց: Չորսծնկանի լիսեռի վրա տեղադրված է զսպանակավոր էլեկտրական խրոցակ, իսկ ծնկների վրա անշարժ ամրացված է կիսալուսնաձեւ մագնիս, որի մագնիսական բեւեռն ուղղված է մագնիսական մխոցի նույնանշան բեւեռին: Որպես ուժեղացուցիչ մագնիս յուրաքանչյուր ծնկին տեղադրված է բեռ բարձրացնող էլեկտրամագնիս: Մագնիսական մխոցները շարժաթելին, իրանը տանող լիսեռին, չորսծնկանի լիսեռները աշխատանքային գլաններին միացված են հաստատուն մագնիսների միջոցով: Ատամնանիվների յուրաքանչյուր ատամի վրա տեղադրված է հաստատուն մագնիս: Տանող լիսեռի վրա կոշտ ամրացված է թափանիվ, իսկ իրանի վրա՝ էլեկտրական մեկնարկիչ:
 Բարձրացվում է մագնիսական էներգիայի մեխանիկական շարժման կերպափոխման արդյունավետությունը, 13 նկ.:

ների միջոցով: Ատամնանիվների ամեն մի ատամի վրա տեղադրված է հաստատուն մագնիս: Տանող լիսեռի վրա կոշտ ամրացված է թափանիվ, իսկ կենտրոնական իրանի վրա՝ էլեկտրական մեկնարկիչ:
 Բարձրացվում է մագնիսական էներգիայի մեխանիկական շարժման կերպափոխման արդյունավետությունը, 15 նկ.:

(51) 7 H02N 11/00 (11) 1321 (13) A2
 (21) P20020113 (22) 19.06.2002
 (42) 16.09.2002
 (71) Յրաչիկ Շամիրյան (RU)
 (72) Յրաչիկ Շամիրյան (RU)
 (73) Յրաչիկ Շամիրյան, ՌԴ, Վոլգոգրադ, Սկոսիրեւի 1բ, հանրակացարան 2, մասնաշենք 4 (RU)
 (54) Էլեկտրամագնիսական շարժիչ
 (57) Գյուտը վերաբերում է մեքենաշինության բնագավառին, մասնավորապես՝ մագնիսական էներգիան մեխանիկական շարժման կերպափոխող սարքերին, կարող է օգտագործվել արդյունաբերության տարբեր ոլորտներում:
 Մագնիսական շարժիչն ունի ծնկավոր տանող եւ չորս չորսծնկանի լիսեռներ, որոնց ծայրերին անշարժ ամրացված են երկուական ատամնանիվ: Տանող լիսեռի կենտրոնական իրանին միացված են մեկ կամ երկու, կամ չորս աշխատանքային գլան, որոնցից յուրաքանչյուրի մեջ անշարժ տեղադրված է գլանաձեւ մագնիսական պարկուճ, իսկ նրա մեջ՝ մագնիսական մխոց: Չորսծնկանի լիսեռի վրա տեղադրված է զսպանակավոր էլեկտրական խրոցակ, իսկ ծնկներից յուրաքանչյուրում՝ բեռ բարձրացնող էլեկտրամագնիս, որի դեպի գլանաձեւ մխոցի տարանուն բեւեռին ուղղված մասը փափուկ մագնիսական նյութից է: Մագնիսական մխոցները շարժաթելին, իրանը տանող լիսեռին, չորսծնկանի լիսեռները աշխատանքային գլաններին միացված են առանցքակալների միջոցով: Ատամնանիվների յուրաքանչյուր ատամի վրա տեղադրված է հաստատուն մագնիս: Տանող լիսեռի վրա կոշտ ամրացված է թափանիվ, իսկ իրանի վրա՝ էլեկտրական մեկնարկիչ:
 Բարձրացվում է մագնիսական էներգիայի մեխանիկական շարժման կերպափոխման արդյունավետությունը, 13 նկ.:

